

ՍՏԵՓԱՆՈՍ Ե. ՍԱԼՄԱՍՏԵՑԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԷԶՄԻԱՇՆԻ

(1543 - 1552)

(Շար. տե'ս «Բագմալիկ» 1962, Բ. 6-8, էջ 131)

Գ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑԻ ՄԱՀՈՒԱՆ
ՊԱՐԱԳԱՆԵՐՆ ՈՒ ԹՈՒԱԿԱՆԸ

Ստեփանոս Սալմաստեցիի մահուան պարագաներուն եւ թուականին քննութեան մէջ մտնելէ առաջ՝ պատշաճ կը համարեմ ներկայացնել նախ զանազան կարծիքներ, զոր յայտնած են պատմագէտները՝ այդ հարցին շուրջ:

Ա. Կարծիք: Լեւ Նշանաւոր պատմագէտը, Ս. Ստարովսկի (1588-1656), իր ամէնէն կարեւոր գործերէն մէկուն մէջ, ուր հաւաքած է Լեւոնտանի բոլոր եկեղեցիներուն մէջ պահուած դամբաններու արձանագրութիւնները, մէջ կը բերէ նաեւ Ստեփանոս Սալմաստեցիի դամբանին արձանագրութիւնը, ինչ ինչ տարբերակներով՝ ներկայիս Լեոպոլսոյ մայր եկեղեցւոյ մէջ գտնուող արձանագրութիւնէն. «HOC SEPULCRUM EST REVERENDI PATRIS STEPHANI PATRIARCHAE MAJORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT ET ADVENIENS LEOPOLIM ANIMAM SUAM DEO TRADIDIT. ANNO DOMINI 1551. DIE 14 JANUARIJ. JULIO III PONT. MAX. REDDIDIT OBEDIENTIAM»⁵⁴:

Նոյնպէս, Լեւ զինանշաններու երեւելի մասնագէտը, Նիկիեցի Կ. (1682-1744), կը հաւատաւ թէ յիշեալ արձանագրութիւնը



նր տեսած է եւ մէջ կը բերէ հետեւեալ ձեւով. «HOC SEPULCRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI PATRIARCHAE MAJORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT ET LEOPOLIM ADVENIENS ANIMAM SUAM DEO TRADIDIT 1551»⁵⁵:

Մինչդեռ Ս. Ռոզը, յետ ըսելու թէ «1551. Ռ. Ստեփանոս Կաթողիկոս էջմիածնի, կամ ընկեցեալ յաթոռոյն, կամ իւրովի թողեալ, երթալ ի Հոմ, եւ կատարեալ զհնազանդութիւն եւ զուխտ իւր, զայ ի Լեոպոլիս, եւ մեռանի յայտմամբ, որպէս ցուցանէ գերեզմանաքարին նորագիրն», մէջ կը բերէ նոյն արձանագրութիւնը հետեւեալ տարբերակով. «HOC SEPULCRUM EST REV. PATRIS STEPHANI PATRIARCHAE MAJORIS ARMENIAE. ROMAE FUIT, ET LEOPOLIM ADVENIENS ANIMAM SUAM DEO TRADIDIT 1551»⁵⁶:

54 Starowolski S., Monumenta Sarmatorum viam universae carnis ingressorum, Cracoviae 1656 p. 300; Gramp J., Index rerum Poloniae, in Archiv. Secret. Vaticana, tom. I, p. 58.

55 Niesiecki K., Herbarz Polski, Lipsk 1839-46, vol. I, p. 108. (Լեւեկէն):

LIM ADVENIENS, ANIMAM SUAM DEO TRADIDIT. 1551»⁵⁶:

Իսկ Մինասովիչ, վերեւ յիշեալ երեւելի հումանիստը եւ պատմագէտը, Ստեփանոսի մահուան թուականի եւ պարագաներու հարցին մէջ կը հետեւի Ստարովսկիի⁵⁷: Լեոպոլսոյ քաղաքին պատմագիրը, Պոտրեյցի Ի. ալ Ռոզըայի յիշատակածին նման արձանագրութիւն մը տեսած է⁵⁸: Պարոնչ, ընդհակառակն, որ Ստեփանոս Ե.ի դամբանը մօտէն տեսնելու առիթը ունեցած է, կ'ըսէ. «... Արձանագրութիւնը, որ այսօր (1869ի տեսնենք) անյայտացած է, պէտք է հետեւեալ ձեւով ըլլար. «HOC SEPULCRUM EST REVERENDISSIMI PATRIS STEPHANI PATRIARCHAE MAJORIS ARMENIAE, QUI ROMAE FUIT, ET LEOPOLIM ADVENIENS ANIMAM SUAM REDDIDIT 1551»⁵⁹:

Հուսկ Կրոմեյցի կը հետեւի Նիկիեցիի, իսկ Լեւիցի կը Լէօ կը հետեւին Ռոզըայի⁶⁰: Արդ, ինչպէս կը տեսնուի մինչեւ հիմա ներկայացուցածներէս, վերոյիշեալ բոլոր պատմագէտները, հիմնուելով Ստեփանոսի դամբանի արձանագրութեան վրայ, յիշեալ Կաթողիկոսին մահը կը համարին տեղի ունեցած Լեոպոլսոյ մէջ, 1551ին:

Բ. Կարծիք: Ընդհակառակն Չամչեան, երեւելի պատմագէտը, կը դրէ թէ «... եւ Ստեփանոս ի Հոմմայ յամի Տեառն 1550... եւ չոքաւ ի Գերմանիա յայցելութիւն կայսեր Կարոլոսի հինգերորդի... եւ ապա անցեալ ընդ Լեւոնտան եւ ընդ Մոսկովստան, եկն Եւսա ի յաջորդ ամին յաշխարհն Հայոց: Եւ իրրեւ եմուտ յէջմիածին, ընկալաւ զնա փառօք Միքայէլ Կաթողիկոս... ուստի եւ ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց Ռ.Ֆ, այն է յամի Տեառն 1553, նա ինքն Ստեփանոս յիշի իրրեւ կաթողիկոս Հայոց: Բայց զկնի այսորիկ իրրեւ անցին սակաւ ժամանակ, հասեալ նորա ի վախճան կենաց իւրոց, մեռաւ»⁶¹: Սակայն նոյն պատմագիրը ուղեով լաւագոյնս ճշտել Ստեփանոս Ե.ի Կաթողիկոս

ստեփանոս տարիները, ցուցակներու բաժնին մէջ կը նշէ թէ Ստեփանոս Սալմաստեցի 1541էն սկսեալ էջմիածնի Աթոռին վրայ մնաց 15 տարի, այսինքն է մինչեւ 1556: Հետեւաբար, Չամչեանի համաձայն՝ Ստեփանոս մեռած ըլլալու էր ոչ թէ Լեւոնտան, այլ Հայաստանի մէջ:

Գ. Կարծիք: Չախարիասիւնի Չ., որ 1812ի տեսնենք Լեոպոլսոյ հայոց մայր եկեղեցւոյն փոխ-ժողովրդագետը եղած է, կը խոստովանի թէ Ստեփանոս Ե.ի դամբանը երբեք տեսած չէ. եւ կը յաւելու. «... կը թուի թէ այդ յուշարձանը (արձանագրութիւնը) հետագայ ժամանակներու մէջ զրուած ըլլալու է բոլորովին կամայական կերպով, ապա թէ ոչ՝ աւելի ճշգրիտ (զրուած) պիտի ըլլար, եւ ոչ թէ լատիններէն, այլ հայերէն»⁶²:

Դ. Կարծիք: Օրմանեան կը համարի թէ Ստեփանոս Սալմաստեցի Լեւոնտանէն վերադարձին, Ղրիմու վրայէն, էջմիածին եկած ու դեռ չառ տարիներ ապրած ըլլայ: Իր «Հայոց եկեղեցի» գործին մէջ Ստեփանոսի մահուան թուականը 1564ին դրած է, մինչ «Ազգապատում»ի մէջ մինչեւ 1567 կը տանի⁶³: Գեղեցի, Փրթի,

56 Ժամանակագրութիւն Ստեփանոս Ռոզըայի, Մատենադարան Միթրաբեանց Վիեննայի, Զեռ. թիւ 266, 1551 թուականին: Ալիշան, Կամենից, էջ 135: Kapetanowicz D., Kate-dra ormianska i jej otoczenie, Lwów 1930, p. 9-12.

57 Cod. Vatic. Lat. N° 12561, p. 106-7, 121-2; Zacharyasiewicz F., Wiadomosc o Ormianach w Polsce, Lwów 1842, p. 39.

58 Chodyncki I., Historia stoletcznego... miasta Lwowa..., Lwów 1829, p. 351.

59 Baracz S., Rys dziejów ormianskich, p. 112, nota 116.

60 Gromicki T., Ormianie w Polsce... p. 21; Lechicki, Kosciół ormanianski w Polsce, p. 41; Լէօ, Պատմութիւն Հայոց, Հատ. Գ, էջ 190.

61 Չամչեան, Պատմութիւն Հայոց, Հատ. Գ, էջ 518-9:

62 Zacharyasiewicz, Անդ, էջ 39, Ծանօթ.:

63 Օրմանեան, Ազգապատում, Բ., էջ 2243, 2246, 2257:

Թուրքերի, Դը Մորկան, հետեւելով Օրմանեանի առաջին կարծիքին՝ 1564ին կը դնեն Ստեփանոսի մահը, առանց ճշտելու անոր մեռած տեղը: Մինչ Օպեր-թինաքի, ընդունելով հանգերձ նոյն թրականը իրը ճիշտ, կ'ընդունի թէ մեր կաթողիկոսը Լէոպոլիս մեռած ըլլայ⁶⁴:

Ե. Կարծիք: Հուսկ Ալիշան, Ակինեան, Ալպոյաճեան, Ստեփանոսի մահուան պարզաներու եւ թուականին համար կը հետեւին Կամենիցի Տարեգիրքին տուեալներուն, իրեւ ապահով աղբիւրի: Յիշատի հոն կը գտնենք հետեւեալ վկայութիւնը. «1552. ի թուին Հայոց ՌԱ. Յունուարի 14, Տէր Ստեփանոս Էջմիածնու կաթողիկոսն եկն ի Փռանկիստանու ի Լուլքաղաք, եւ անդ վախճանեցաւ»⁶⁵:

Արդ, այժմ հարց կ'ըլլէ թէ ո՞րն է վերեւ բերուած կարծիքներէն պատմական իրողութեան համապատասխանողը: Այդ հարցին վերաբերեալ, վերջերս, «Էջմիածին» թերթին մէջ երկար, հմտալից ու հանճարեղ յօդուած մը երեւցաւ ստորագրուած Յ. Ս. Անասեանի կողմէ⁶⁶, որ ծանօթ է իր հոյակապ աշխատութեամբ՝ «Հայկական Մատենագիտութիւն, (Երեւան, 1959, հտ. Ա.)»: Նախ քան մեր կարծիքը ներկայացնելը, համառօտ մը, որ քան կարելի, պիտի տանք ամփոփողը այդ ընդարձակ յօդուածին, իր գլխաւոր կէտերուն մէջ:

Հեղինակը իր յօդուածը կը սկսի հաւաստելով՝ թէ երկու պատմական գրաւոր աղբիւրներ կը ճանչնայ Ստեփանոս Ե.ի մահուան թուականին վերաբերեալ. ատոնք են Կամենիցի Տարեգիրքը, եւ Ս. Ռոշթայի Ժամանակագրութիւնը: Սակայն, այդ աղբիւրները Ժամանակակից գրութիւններ չեն (այսինքն յիշեալ Կաթողիկոսին ատեն գրուած չեն): Առաջինը թէ գարու առաջին կէսին կը պատկանի. իսկ երկրորդը՝ ԺԸ գարու առաջին կէսին: Հետեւաբար, կը յաւելու ան, այդ աղբիւրները չափազանց տարակուսական են, մանաւանդ թէ՛ զուրկ պատմական հիմէ⁶⁷: Յետոյ անդրադառնալով Ստեփանոսի դամբանի արձանագրութեան,

կ'ընդունի թէ նման արձանագրութիւններ, իրեւ Ժամանակակից յուշարձաններ ընդհանրապէս մեծարժէք աղբիւրներ են՝ պատմական իրողութեանց ստուգութեան համար: Ուստի, կ'ըսէ ան, պէտք էինք նկատի առնել Սարմատեցիի դամբանի արձանագրութիւնը, եթէ ուրիշ աւելի ըստոյգ տուեալներ արդարացի կասկածանքներ չյարուցանէին անոր դէմ⁶⁸:

Տեսնենք այժմ թէ ի՞նչ են այդ տարակուսանքները: Նախ եւ առաջ, կը գրէ պատմական յօդուածագիրը. «Անցեալում մեր յայտնի պատմաբաններից մի քանիսը Ստեփանոս Սարմատեցու կաթողիկոսութեան տեղագրութիւնը գրել են շատ աւելի ուշ քան 1551/52 թուականները: Այսպէս օրինակ ըստ Չամչեանի, Ստեփանոս Սարմատեցին Էջմիածին վերադառնալուց յետոյ, 1553 թուականի մի յիշատակարանում յիշում է որպէս կաթողիկոս»: Նոյն պատմագիրը յետոյ Ժամանակագրական ցուցակներում մէջ Ստեփանոսի մահը կը հասցնէ 1555/56ին: «Հ. Ղ. Ալիշանը Կաֆայում գրուած մի յիշատակարանի հիման վրայ՝ Սարմատեցու կաթողիկոսութեան սահմանը դնում է

64 Գեիցեր, Համառօտ պատմութիւն Հայոց, (Թրգ. Գալեմքեարեան Հ. Գ.) Վիեննա, 1897, էջ 113: Petit L., Dict. Théol. Cath. T. I, col. 1924; Tournèze F., Dict. d'Hist. et de Géogr. eccl., T. IV, col 373; De Morgan J., Histoire du peuple arménien, Paris-Nancy 1919, p. 365; Obertynski S., Die florentiner Union..., p. 34, 37 seq.

65 Մեր անձնական թղթակցութիւնը Հ. Ակինեանի հետ, ուր ան կը յիշէր Ալիշան, Կամենիցի էջ 19: Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք հոս մեծարգոյ բանասէր Հօր, որ մեզի նպաստեց ուրիշ բազմաթիւ խորհուրդներով: Ալպոյաճեան Ա., Ստեփանոս Սարմատեցի եւ Ստեփանոս Արքեպիսկոպոսներու Ժամանակագրութիւնը, Սիոն, 1931, էջ 305 եւ յջ:

66 Անասեան, Դիտողութիւններ Ստեփանոս Սարմատեցու կենսագրութեան վերաբերեալ, Էջմիածին, 1956, Բ-Թ, էջ 93-99, ԺԱ-ԺԲ, էջ 68-76:

67 Անդ, Բ-Թ, էջ 94, 95:

68 Անդ, էջ 95:

1564 թուականին»⁶⁹: Հուսկ «Օրմանեան նոյնպէս ընդունում է այս 1564 թուականը իր «Հայոց եկեղեցին» աշխատութեան մէջ, իսկ «Ազգապատում»ի մէջ միտում է թուականը տանել մինչեւ 1566 կամ 1567»⁷⁰:

Բայց այս հարցին ճշգրիտ լուծումին համար «Հարկ է յատկապէս հաշուի առնել ժէ գարի պատմագիր Առաքել Դաւրիթեցուն, որի Պատմութեան ԼԱ գլուխը Հայոց կաթողիկոսների Ժամանակագրութիւնն է պարունակում, Ներսէս Շնորհալուց սկսած մինչեւ Յակոբ Զուղայեցին (1165—1655)»: Այս գաւազանագրքէն իրեւ մեր նիւթին վերաբերող, հետեւեալ հատուածը մէջ կը բերէ.

«ՁԶԵ Թ. (1536) կաթողիկոս Տէր Գրիգոր:

ՁՂ Թ. (1541) նոյն Տէր Գրիգոր, այլ եւ եղեւ կաթողիկոս Տէր Ստեփանոս Սարմատեցի:

ՁՂԴ Թ. (1545) նոյն Տէր Ստեփանոս, այլ եւ եղեւ կաթողիկոս Տէր Միքայէլ:

ՌԶ Թ. (1557) նոյն Տէր Ստեփանոս եւ նոյն Տէր Միքայէլ, այլ եւ եղեն կաթողիկոսք Տէր Բարսեղ եւ Տէր Գրիգոր:

ՌԶԶ Թ. (1567) նոյն Տէր Միքայէլ եւ նոյն Տէր Բարսեղ եւ նոյն Տէր Գրիգոր. այլ եւ եղեւ կաթողիկոս Տէր Ստեփանոս Առնշեցի»⁷¹:

Արդ, «Դաւրիթեցու գաւազանագրանկը, կը շարունակէ մեր յօդուածագիրը, մեզ համար արժէք է ներկայացնում այն տեսակետից, որ նա յօրինում է Ժամանակակից յիշատակարանների հիման վրայ, յատկապէս Սարմատեցու շրջանին վերաբերող մասում, եւ այդ պատճառով նրա տուած թուականները անտարակոյս ճշգրիտ են: Բայց, ինչպէս կը խոստովանի պատմական յօդուածագիրը, նա գահակալման թուականներ չէ որ տալիս է, այլ ցոյց է տալիս միայն թէ այս կամ այն թուականին յիշատակուած է եղել այս կամ այն կաթողիկոսը»: Ուստի, կ'եղբակացնէ Անասեան, «այս հաշուով՝ Դաւրիթեցու մօտ մենք ունենք մի հաւաստի վկայութիւն թէ Ստեփանոս

Սարմատեցին որպէս կաթողիկոս յիշատակուած է եղել 1557 թուականի մի յիշատակարանում... որով յամենայն դէպս Չամչեանը, Ալիշանը, եւ Օրմանեանը, որոնք հետեւել են Դաւրիթեցու գաւազանագրանկին, հիմնականում իրաւացի են նրանում՝ թէ Սարմատեցու կաթողիկոսութիւնը շարունակուել է Եւրոպայից նրա վերադառնալուց յետոյ»⁷²:

Անասեան հարկ կը տեսնէ յայտնելու թէ իր անձնական պրպտումներն ալ զինքը բերած են նոյն համոզումին, Դաւրիթեցիի վկայութեան ճշտութեան նկատմամբ. որովհետեւ Երեւանի Պետական Մատենադարանի մէջ գտած է Յովհաննիսուկի վերեւ յիշուած երեք յիշատակարանները, որոնք, ըստ իր կարծիքին, կը հաստատեն թէ Ստեփանոս Սարմատեցին մեռած չէր 1551/52 թուականներուն, այլ դեռ կենդանի: Ուստի պատմական յօդուածագիրը, յետ յիշատակելու առաջին յիշատակարանին հատուածը, (տես վերը Բ. մասին մէջ), կը յաւելու. «Այս յիշատակարանը, ի հարկ է, իր այս ձեւին մէջ պարզ չէ եւ կարող է սխալ մեկնարանուել, հասկացնելով թէ Ստեփանոս Սարմատեցի կաթողիկոսն է որ ի Ռ. Բուրի շայն առ Գրիստոս փոխեցաւ յիշով քաղաքի, եւ եղ յաքոռ եպիսկոպոսութեան իրավայ ըզ-Գրիգոր վարդապետն, այսինքն թէ նա մահացել է 1551 թուականին Լվովում, որ տեղ եւ Գրիգոր Վարազեցուն եպիսկոպոս է կարգել»: Յիշատակարանի հենց այսպիսի մեկնարանումն էլ անընական չէր լինի, կը խոստովանի մեր յօդուածագիրը, եթէ նոյն ձեւագրի երկրորդ յիշատակարանը չպարտադրէր մեզ ուղղում

69 Ալիշան յետոյ կարծիքը փոխելով Ստեփանոսի մահուան թուականը 1552ին գրաւ. հիմա. Կամենից, էջ 19:

70 Անասեան, Անդ, էջ 95, հանգերձ մատենագրութեամբ:

71 Անասեան, Անդ, էջ 95-96: Առաքել Դավրիթեցի, Գիրք Պատմութեան, Ամսդերտամ, 1669, գլ. ԼԱ, էջ 423:

72 Անդ:

մտցնել այստեղ: Իր երկրորդ յիշատակա-
րանում հեղինակը գրում է ... Գրիգոր
Բաբունյացուն, որ քուրմ Ռ-ի յապրիլի
Ժ-ի եպիսկոպոս եղել էր Կամենից
մայրա/ֆաղա/ֆաղս...» ևւն: Ուստի կը
յայտարարէ Անասեան. «Այս յիշատակա-
րանից հետեւում է որ 1551 թուականին
մահացողը ո'չ թէ կաթողիկոսն էր, այլ
Լվովի նախկին եպիսկոպոսը, որի տեղը
1555 թուականին անցնում էր Գրիգոր
Վարդապետին: Ուրեմն, Ստեփանոս Սալ-
մաստեցին, որ Գրիգոր Վարդապետին ձեռ-
նադրում է եւ առաջնորդ նշանակում,
տակաւին կենդանի էր նոյն թուականի
Ապրիլի 14ին եւ դառնում էր Լվովում»⁷³:

Պատուական յօդուածագիրը կարծես
զեռ գոհ է այն փաստերէն որ ինք այն-
քան խնամքով հաւաքած է. ուստի աչ-
քէ անցնելով զանազան ուրիշ հայ գրիչ-
ներ եւ ժամանակագիրներ, կը ներկայա-
ցնէ յիշատակարաններու նոր շարք մը եւ
կը հաւատէ թէ «Ստեփանոս Սալմաստե-
ցուն այս շրջանի կաթողիկոսութեան մա-
սին ձայնակցող գրիչները շատ են»: Իր
թուարկած յիշատակարանները հետեւ-
եալներն են.

1553 թուականի յունուարին Աստուածա-
տուր Տարօնեցին Կեսարեայի Ս. Կա-
րապետի վանքում վերանորոգում է
մի ձեռագիր Աւետարան «ի հայրա-
պետութեան Տէր Ստեփանոս Կաթո-
ղիկոսին»: Չամչեան ալ նման յիշա-
տակարան ունեցած է ձեռքի տակ,
երբ կ'ըսէ. «Ի յիշատակարանի միում
գրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց
ՌԲ, այն է յամի Տեառն 1553, նա
ինքն Ստեփանոս յիշի իբրեւ Կաթո-
ղիկոս Հայոց»:

1554 թուականին Աստուածատուր Գնու-
նին Աւետարան վանքում կազմում է մի
Յայտմաւորք «ի կաթողիկոսութեան
Տէր Ստեփանոսի»:

1555 թուականին Ներսէս Արճիլընցին
(Արճիլեցի⁷⁴) Լվովում ընդօրինա-
կում է մի Մաշտոց «ի կաթողիկո-
սութեան Էջմիածնի Տեառն Տէր
Ստեփանոսի»:

1556 թուականից «ի Տէր Միքայէլ Կա-
թողիկոսէ եւ ի Տէր Ստեփանոս Կա-
թողիկոսէ» Սանահին թեմին տըր-
ուած երկու անտիպ կոնդակներ:

1557 թուականին արդէն Առաքել Դաւրի-
թեցու մօտ է յիշատակում:

1560 թուականին Եղիա գրիչ ... ընդօրին-
ակում է մի Յայտմաւորք, «ի հայ-
րապետութեան Տեառն Ս. Էջմիածնի
Տէր Ստեփանոսին, Տէր Բարսեղին
եւ գ...ասացէք»:

— Նոյն թուականին Ներսէս Երէց (Ար-
ճիլեցի⁷⁵) Լվովում ընդօրինակում է
Արուսայիցի Մարգարէականութիւնը,
«ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն
Ստեփանոսի»:

1562 թուականին Միքայէլ քահանան Լը-
վովում աւարտում է իր թարգմա-
նած հայտառութեան Նոր
կտակարանի ընդօրինակութիւնը,
«Կաթողիկոս Լուսուկայ Տէր Սոյե-
փանոսունկ»⁷⁶:

«Եւ այսպէս, կը շարունակէ գրել Անա-
սեան, սոյն թուականներից յետոյ եւս
շարունակում է Ստեփանոսի յիշատա-
կութիւնը բաղմամբ յիշատակարանե-
րում»:

«Բայց այստեղ մի ուրիշ խնդիր է ծա-
ղում, նկատել կու տայ ան. մի քանի յի-
շատակարաններում ժամանակի կաթողի-
կոս Ստեփանոսը կոչւում է Արքեպիսկոպ
(կամ Առնջեցի): Ո՞վ պիտի լինի այս
Ստեփանոս Արքեպիսկոպը»: Այս հարցումին
պատասխանը տալէ առաջ՝ կը կանխէ ըսել
հմուտ պատմագէտը թէ յիշատակարանե-
րը ոչ մէկ տեղեկութիւն կու տան անոր
նկատմամբ, եւ թէ միայն Դաւրիթեցին,
հիմնուած անշուշտ յիշատակարանի մը
վրայ, կը յիշէ զինքը իբրեւ կաթողիկոս

1567 թուականին: Եւ ապա կը յարէ. «Իսկ
մենք կարծում ենք որ նրանք (Սալմաս-
տեցին եւ Արքեպիսկոպը) տարբեր անձեր

⁷³ Անասեան, Անդ, էջ 97:

⁷⁴ Անասեան, Անդ, էջ 98, աղբիւրներու յիշա-
տակութեամբ:

չեն»⁷⁵: Եւ այս իր հաւաստումին համար
կը բերէ հետեւեալ փաստը. «Կամենիցեան
տարեգրութեան մէջ աղուցուած հետեւ-
եալ յիշատակարանը. Թվ. ՌԺԱ Հայոց
ազգիս Տէր Ստեփանոս Արքեպիսկոպ
կաթո-
ղիկոսն եկաւ ի Կամենիցս ստոյգ եւ ճշ-
մարիտ նախապահաւ. եւ եկաց ի Կամե-
նիցս ի Հրեշտակապետացն մինչեւ ի Տեո-
րիմութիւնն Քրիստոսի. եւ ապա գնաց յի-
լով ֆաղաֆն եւ անդ ընդունելի եւ պատ-
ուելի եղել քրիստոնէից. եւ ապա դար-
ձեալ եկն ի Կամենիցս... Բայց մեծ զար-
մանք գնեց կալաւ, որ ի յայս աշխարհս
գՍ. Էջմիածնայ կաթողիկոսն տեսաք.
վասն զի յօրէ յորմէ հետէ գՍ. Էջմիած-
նայ արքուն կարգել է Ս. Լուսաւորիչն
մեր Հայոց ազգիս մինչեւ ցայժմ Կաթո-
ղիկոս ի յայս աշխարհս բնաւ ոք չէր տե-
սեալ...»⁷⁶: Ուստի կը հարցնէ Անասեան.
Ի՞նչպէս կրնար յիշեալ ժամանակագիրը
գրել այսպիսի բան՝ քանի որ 1552ին Ստե-
փանոս Սալմաստեցին Լէոպոլիս գտնուած
է: Ուստի կը կարծենք, կը գրէ Անասեան,
թէ Կամենիցի Տարեգիրքն ընդօրինակող
գրիչը սխալմամբ ՌԺԱ գրած է փոխա-
նակ ՌՍ. գրելու: Եւ ահա այս ուղղումով՝
յիշատակարանի պարունակութիւնը հաս-
կրնալի կը դառնայ: «Արդ, կ'եղբակացնէ
Անասեան, համադրելով այս յիշատակա-
րանի բովանդակութիւնը, որն անտարա-
կոյս Ստեփանոս Սալմաստեցուն է վերա-
րերում, այն իրողութեան հետ՝ թէ յի-
շատակարանում կոչւում է Արքեպիսկոպ,
մենք իրօք պալիս ենք այն համոզման,
թէ Ստեփանոս Սալմաստեցին եւ Ստե-
փանոս Արքեպիսկոպ միեւնոյն անձնուո-
րութիւնն են»⁷⁷: Սակայն Դաւրիթեցին,
իրեւ ժէ դարու հեղինակ, չէր կրնար
անշուշտ գիտնալ թէ Սալմաստեցի եւ Ա-
րքեպիսկոպ միեւնոյն անձնուորութիւնն են.
այդ իսկ պատճառաւ, կը համարի Անա-
սեան, Դաւրիթեցին իր ժամանակագրու-
թեան մէջ զանոնք իբրեւ երկու տարբեր
Կաթողիկոսներ յիշած է:

Այս կէտին՝ ուրիշ հարց մը արդարացի
կերպով կը յարուցանէ հանճարեղ յօդ-
ուածագիրը: Ի՞նչպէս Սալմաստեցին կոչ-

ուած է նաեւ Արքեպիսկոպ: Որոշն կը պա-
տասխանէ. «Այդ մասին մենք գիտենք էջ-
միածնի Գրիգոր ԺԱ Բիւզանդացի կաթո-
ղիկոսի 1541 թուակիր մի կոնդակից, ո-
րով նա վանքի միաբաններից Աթանաս
Վարդապետին առաջնորդ հաստատելով
նոյն վանքին, նրա մասին գրում է: «Որ
էր անեալ եւ վարժեալ ի Ս. Նախավկայի
վանքն եւ ուսեալ գիմաստ կրթական ի
ձեռն Ստեփանոսի քաջ բարունակաւ
Սալմաստեցոյ»: Ուստի Ստեփանոս Սալ-
մաստեցին եղած էր ասեան մը Մաղարթայ
Ս. Նախավկայի վանքին մէջ ուսուցիչ:
Այդ վանքը, սակայն, կը գտնուի Ալեքսան-
դաւառին մէջ, կամ Արքեպիսկոպ: Հետեւա-
րար Սալմաստեցին այս վանքի դաւառին
անունով ժառանգած ըլլալու է նաեւ Ա-
րքեպիսկոպ մականունը: Եւ առաջին անգամը
չէ որ հայ կաթողիկոսներ կամ գրիչներ
զանազան մականուններով կոչուած ըլ-
լան ⁷⁸: Աւելցնենք ալ որ, կ'ըսէ Անասեան,
հայ պատմագիրներու եւ ժամանակագիր-
ներու մօտ ոչ մէկ փաստ կայ՝ որ ապա-
ցուցանէ թէ Սալմաստեցի եւ Արքեպիսկոպ
տարբեր անձեր ըլլան. թող որ անոնք ա-
մէնքն ալ կախում ունին արդէն Դաւրի-
թեցիէն ⁷⁹:

Ուստի ընդունելով այս երկու մակա-
նուններու նոյն անձի վերաբերիլը, կը
տեսնենք, կը շարունակէ գրել Անասեան,
թէ Սալմաստեցիի կաթողիկոսութիւնը կը
շարունակուի յիշատակուիլ յաջորդ տա-
րիներու յիշատակարաններուն մէջ: Այս-
պէս օրինակ.

1563-ին Թուման անուն մէկը Լէոպոլսոյ
մէջ ընդօրինակած է Պօղոս Առա-
քելի թուղթերը «(ի) Հայրապե-
տութեան Տեառն Տէր Ստեփանոսի
Կաթողիկոսի Արքեպիսկոպ»:

1564-ին Կաֆայում մի գրիչ յիշատակում

⁷⁵ Անասեան, Անդ, էջ 99:

⁷⁶ Հմմտ. Ալեքան, Կամենից, էջ 32:

⁷⁷ Հմմտ. Էջմիածին 1956, ԺԱ-ԺԲ, էջ 68:

⁷⁸ Անդ, էջ 68-69, աղբիւրներու յիշատակու-
թեամբ:

⁷⁹ Անդ, էջ 69-70:

է Ստեփանոսին որպէս ժամանակի կաթողիկոս, ինչպէս հաղորդում է Ղ. Ալիշանը:

1565 թուականին Մինաս Տիվրիկցին Լվովում ընդօրինակում է մի պարզա-տումար «Ի կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի Տէր Ստեփանոսի Առնեց-ւոյ»:

— Նոյն թուականին Մինաս նոտարը (Տիվրիկցի⁸⁰) Լվովում աւարտում է ընդօրինակութիւնը Եփրեմ Ասորու քարոզներին «(Ի) Հայրապետութեան Տէր Տէր Ստեփանոս կաթողիկոսին Առնեցեցւոյ»:

1566 թուականին Կամենիցի Հայոց Ս. Նիկողայոս եկեղեցու յիշատակարա-նում յիշում է որպէս Հայոց կա-թողիկոս Տէր Ստեփանոսը:

1567 թուականին Տիվրիկցի մի զրիչ, հաւանօրէն վերոյիշեալ Մինասը, Լվովում ընդօրինակում է մի սաղ-մասարան «Ի կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի Տէր Ստեփանոս Առնե-ցեցւոյ»:

— Իսկ այս նոյն թուականին արդէն Դաւրիթեցին էլ էր յիշատակում Ստեփանոս Սարմաստեցուն [կամ Առնեցեցուն]⁸⁰:

Հետեւաբար, Անասեան այս բոլորէն վերջ կ'եզրակացնէ. «Այսպիսով ուրեմն մենք համարում ենք իրողութիւն որ Ստե-փանոս Սարմաստեցին 1551/52 թուական-ներէից յետոյ դեռ երկար տարիներ դանդա-ւել էր կաթողիկոսական Աթոռի վրայ. դուցէ եւ ընդհատումներով, հակառակ չենք. իսկ ամէն պարագայի, մի բան միշտ անվիճելի է. այն՝ որ Դաւրիթեցու մօտ յիշատակուած 1557 թուականին, առնուազն այս թուականին՝ տակաւին կենդանի էր Ստեփանոս Սարմաստեցին: Այս մասին աւելորդ է երկարելը: Ուստի կանգ առնելով այստեղ, դանք այն խըն-դրին՝ թէ ի՞նչ արժէք են ներկայացնում Ստեփանոս Սարմաստեցու Լվովում մեռած ու թաղուած լինելուն վերաբերող տը-կայները»⁸¹:

Մենք ալ պահ մը կանգ առնենք նախ քան երկրորդ մասին ներկայացումը, քա-նի մը զիտողութիւններ ընելու համար Ա-նասեանի այս առաջին մասին մէջ ըսած-ներուն:

Անասեան, ինչպէս տեսանք, իր տեսու-թեան իրր փաստ ունի հինգ տարրեր: 1.— Դաւրիթեցիի վկայութիւնը: 2.— Յով-հաննիսուկի Յիշատակարանները: 3.— 1553–1562 թուականներու յիշատակա-րաններու արժէքը: 4.— Սարմաստեցի-Արընջեցի անուններու նոյնութիւնը: 5.— Հուսկ 1562–1567 տարիներու յիշատակա-րաններու վկայութիւնները:

1. — Առաքել Դաւրիթեցի ծնած է ԺԶ. դարու վերջերը, եւ իր վկայութեան հա-մաձայն, սնած ու մեծցած է Էջմիածին: Իրեն ուսուցիչ եւ մեկնեաւ եղած է Փի-լիպպոս Աղբակեցի, որ յետոյ կաթողի-կոս ալ եղաւ: Ասոր խորհրդով, 1651ին, սկսած է զրել իր Պատմութիւնը, սկսեալ 1601 թուականէն. հասնելով 1655 թուա-կանը՝ պահ մը թողած է: Յետոյ Յակոբ Դ. Կաթողիկոսի հրամանով շարունակած է, 1658ին մինչեւ 1662 թուականը: Մե-ռած է 1669ին, ինչպէս յայտնի է Էջմիա-ծնի Գերեզմանատան մէջ դառնուող անոր դամբանի արձանագրութենէն. մինչ Ա-նասեանի համաձայն՝ 1670ին մեռած ըլ-լալու է⁸²: Դաւրիթեցին, կ'ըսէ Անասեան, ճշմարտախօս պատմադիր է. ան կը պատ-մէ զէպքեր՝ որոնց ականատես եղած է, կամ կրցած է քաղել ականատեսներու բերնէն: Իսկ Թուրքալիկ կը վկայէ թէ ան բարեպաշտ եւ բարեմիտ անձ է, որ

80 Անդ, էջ 70–71, աղբիւրներու յիշատակու-թեամբ. սակայն զիտել տալու ենք որ Դա-ւրիթեցին, Անասեանի ըսածին հակառակ, 1567 թուականին կը յիշէ Ստեփանոս Առնե-ցեցին եւ ոչ թէ Սարմաստեցին: Հմտ. անոր Պատմութեան Գիրքը, ԳԼ ԼԱ, էջ 423:

81 Անասեան, Անդ, էջ 71:

82 Միւլլէր, Առաքել Դաւրիթեցի, Հանգ. Ամս. 1889, էջ 139 եւ յժ, Անասեան, Հայկական Մատենագիտութիւն, Երեւան, 1959, Ա., էջ 1144:

զիտակցարար Հ'այլայլեր ճշմարտութիւ-նը⁸³:

Անշուշտ մենք նպատակ չունինք հակա-ռակելու յիշեալ վկայութիւններուն. սա-կայն, չենք ալ կրնար նկատել չառնել որ Դաւրիթեցի զէպքերը պատմելու առեն՝ յաճախ քննադատութենէ չ'անցըներ զա-նոնք, չափազանց միամիտ եւ զերահա-ւան կը դառնուի ուրիշին տեղեկութիւննե-րուն: Ան նոյնիսկ դանց ըրած է յիշատա-կել (զիտակցարա՞ր) իր Պատմութեան մէջ՝ որ երեք ժամանակակից մեծագոյն կաթողիկոսներ, Մովսէս Տաթևացի, Փիլիպպոս Աղբակեցի, Յակոբ Զուղայե-ցին, Հոռմի քահանայապետներուն զրկած էին իրենց հաւատքի դաւանութեան թուղ-թերը⁸⁴: Ու դեռ աւելին, Դաւրիթեցի իրեն ժամանակակից կաթողիկոսներու մասին սխալ կամ անճշտ թուականներ կու տայ. օրինակ, Մելքիսեդեկի մահը կը դնէ Ռ.ՇԵ (= 1626) թուականին, Մովսէս Գ. ի մա-հը 14 Մայիս ՌԶԱ (= 1632) թուականին, Փիլիպպոս Գ. ի ընտրութիւնը ՌԶԱ. ի վերջերը եւ անոր օծումը 13 Յունուար ՌԶԲ (= 1633) թուականին⁸⁵: Ընդհակա-ռակն, մեղի աւելի ստոյգ աղբիւրէ ծա-նօթ է որ Մելքիսեդեկի մեռած է 18/27 Մարտ Ռ.ՇԶ (= 1627) թուականին. Օ-դոստոս 30ին զրած է նամակ մը Լատիս-լաւ Դ. Լեհաստանի թագաւորին՝ Հայ զաղութին ի նպատ, եւ մեռած է 21/31 Մայիս ՌԶԲ (= 1633) թուականին: Փի-լիպպոս Գ. Էջմիածնի կաթողիկոս ընտը-րուած է 1633ի վերջերը եւ օծուած է ՌԶԳ (= 1634) թուականի Յունուար 13ին⁸⁶: Ուստի իրերու այս կացութեան մէջ, կա-րելի չէ առանց վերադառնալ թեմի ընդու-նիլ արդոյ Անասեանի հաւատարմները՝ թէ «Դաւրիթեցու դաւադանացանիւր մեղ համար արժէք է ներկայացնում այն տե-սակէտից՝ որ նա հիմնուած է ժամանա-կակից յիշատակարանների հիման վը-րայ», եւ թէ հետեւաբար, «Առաքել Դաւ-րիթեցու մօտ մենք ունենք մի հաւատար-մի կայութիւն այն մասին՝ թէ Ստեփանոս Սարմաստեցին որպէս կաթողիկոս յիշա-

տակուած է եղել 1557 թուականի մի յի-շատակարանում»⁸⁷: Մենք պիտի ուզէինք ունենալ այդ յիշատակարանը, քննելու համար թէ արդեօք Դաւրիթեցին ալ Չամ-չեանի նման ըրած է: Վասն զի այս վերջինս ալ կը հաստատէր թէ «... ի յի-շատակարանի միում զրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց ՌԲ, այն է յամի Տեառն 1553, նա ինքն Ստեփանոս (Սարմաստեցի) յիշի իրեւ կաթողիկոս Հայոց»⁸⁸: Մինչ-դեռ յիշատակարանը պարզապէս կ'ըսէ. «Արդ կրկին նորոգեալ աստուածախօս Աւետարան ի թուականութեան Հայոց ՌԲ յունուար ամսոյ Դ. ... ի հայրապե-տութեան Տէր Ստեփանոս Կաթողիկո-սին...»⁸⁹: Յիշատակարանին մէջ կը պակսի որեւէ ճշտում թէ ո՞ր Ստեփանոս կաթողիկոսի մասին է խօսքը. Չամչեան ընդհակառակն ուղած է ճշտել թէ խօսքը Սարմաստեցիի համար ըլլայ: Նոյն ձեւով Օրմանեան ալ վարուած է ուրիշ յիշա-տակարաններու հետ, որոնք կը յիշեն պարզապէս Ստեփանոս Կաթողիկոս մը, առանց որեւէ բնորոշումի: Այնպէս որ Ալ-պոյաճեան անխարան կը գրէ թէ Օրմա-նեան «Այս կէտին մէջ ենթարկուած է խո-

83 Tournebize F., Araquel de Tauris, art. in Dict. d'Hist. et de Géogr. eccl., vol. III, col. 1435.

84 Arch. S. Congr. Prop. Fide, Scrit. Rif. Congr. Gen. vol. 181, f. 98, 221; vol. 292, f. 341 v; vol. 222, f. 88; Petrowicz G., L'Unione degli Armeni di Polonia con le S. Sede, Roma 1950 p. 58, 114, 197 seq.

85 Առաքել Դաւրիթեցի, Գիրք Պատմութեան, ԳԼ ԺԲ, էջ 226, ԳԼ ԻԲ, էջ 358, ԳԼ ԻԴ, էջ 307, ԳԼ ԾԵ, էջ 612, ԳԼ ԻԵ, էջ 309–310, ԳԼ ԼԱ, էջ 423:

86 Ալիքեան, Մովսէս Տաթևացի, էջ 55 եւ յժ, էջ 134 յժ, 139–141: Ալիշան, Կամենից, էջ 241: Petrowicz, op. cit. p. 21, 58 63.

87 Անասեան, Դիտողութիւններ, Էջմիածին 1956, Բ–Թ, էջ 96:

88 Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ., էջ 519:

89 Սարգիսեան Հ. Բ. Մայր ցուցակ հայերէն Ձե-ռագրաց Մատենադարանին Ս. Ղազարու, Վե-նետիկ, 1914: Հա. Ա., էջ 417: Ալպոյաճեան, Ստեփանոս Սարմաստեցի, Սիոն 1931, էջ 309:

չոր շփոթութեան մը եւ ամբողջ իրար խառնած է զերթէ ժամանակակից եւ դործունէութեամբ իրարու նմանող երկու համանուն կաթողիկոսներու, Ստեփանոս Սարմատեցիի եւ Ստեփանոս Արքեպիսկոպոսի, եւ մոլորած է ժամանակագրական քառսի մը մէջ: Այնպէս որ Ազգապատմութի Բ. հատորին Ստեփանոս Ե. Սարմատեցի եւ Միքայէլ Սերաստացի կաթողիկոսներուն վերաբերեալ էջերը (էջ 2238-2267) կը կարօտին հիմնական սրբապետութեան եւ բացարձակ վերահալմութեան»⁹⁰:

2. - Իսկ Անասեան, առանց վերադառնալ ընդունելով Դաւրիթեցիի վկայութիւնը, կ'ըսէ բառացի. «... Մեր անձնական հետազոտութիւնները հաստատում են Դաւրիթեցու վկայութեան ճշտութիւնը»⁹¹: Եւ ասոր ի նպաստ մէջ կը բերէ Յովհաննիստիկոս նշանաւոր յիշատակարանները, զորս մենք ալ հոս անգամ մը եւս կը յիշատակենք ի զիւրութիւն ընթերցողներու:

ա. - «Փառք համարոյ սուրբ եւ միաթաղ աստուածութեան... աղաչեմ դամենեսեանդ որք հանդիպիք այսմ տառի եւն... Դարձեալ աղաչեմ աղօթից մի՛ մոռնաք զԳրիգոր Վարապետին նորաբողբոջ քաջ բարունապետն... եւ զուսուցիչն զՍտեփանոս կաթողիկոս Սարմատեցին, որ ի Ռ. թուին Հայոց առ Քրիստոս փութեցաւ յիւր քաղաքին, եւ եղ յաթու եպիսկոպոսութեան Իլովայ զԳրիգոր վարդապետն, զարդար եւ զանարատն կուսակրօն, վկայեալն ի բաղմաց, վասն ազաւանաց այս ժողովրդեանս...»⁹²:

բ. - «Գրիգոր Բարունապետն, որ թուին Ռ. Դ, յապրիլ Ժ. Եպիսկոպոս եղեւ Լով եւ Կամենից մայրա(քաղա)քացս, ազաւանօք եւ բազում խնդրութեամբ ժողովրդիկեանս հայկազեան աղբիս, որ աստ կան բնակեալ ի մէջ խառնախառն աղբացս Լեհ եւ Ուսուղ կոչեցեալ, ի թաղաւորութեան Զիւմոնգ Ակոստոսի...»⁹³:

Վերոյիշեալ պատմական յօդուածագիրը կ'եզրակացնէ. «Այս յիշատակարանից

հետեւում է որ 1551 թուականին մահացողը ոչ թէ կաթողիկոսն էր, այլ Լովի նախկին եպիսկոպոսը, որի տեղ 1555 թվականին անցնում էր Գրիգոր Վարապետին: Ուրեմն, Ստեփանոս Սարմատեցին, որ Գրիգոր Վարապետին ձեռնադրում է եւ առաջնորդ նշանակում, տակաւին կենդանի էր նոյն թուականի ապրիլի 14ին, եւ դառնում էր Լովիում...»⁹⁴:

Իսկ մենք արդէն վերը (տես) ցույց տուինք թէ Գրիգոր Վարապետին նախորդը, Գալուստ Ստեփանեան (Լեհերէն Գիւեան կոչուած), վախճանած էր 1542ի առեւտները: Այս պատմական իրողութիւնը, մեզի համաձայն, անվիճելի է: Ուստի Յովհաննիստիկոս յիշատակարանները կը վկայեն Ստեփանոս Սարմատեցիի մահը՝ 1551ին, Լեհերէն մէջ, եւ ոչ թէ Գրիգոր Վարապետին նախորդին: Իսկ Նոր-բնորդ առաջնորդը, Գրիգոր, ինչպէս տեսանք, Լեհաստանի Հայոց մէջ ծագած տարածաշնութիւններու հետեւանքով, իր պաշտօնին մէջ կրցաւ հաստատուիլ, Սիւրբաբնոյ թաղաւորին հրամանով, միայն 1555ի Մարտ 21ին: Հետեւաբար Յովհաննիստիկոս իր երկրորդ յիշատակարանին մէջ արձանագրած է այն իրողութիւնը, թէ Գրիգոր Վարապետին Լեհաստանի Հայոց (Լովի եւ Կամենիցի) արքեպիսկոպոս եղած է (իրաւապէս) 1555ի ապրիլի 14ին: Ուրեմն, պէտք է եզրակացնենք՝ որ մեր ըսածներու լոյսին տակ, Յովհաննիստիկոս յիշատակարաններու այն մեկնութիւնը զոր տուած է արդոյ Անասեան՝ անհիմն է. եւ թէ այդ յիշատակարանները իր ըսածներուն ճիշտ հակառակը կը փաստեն:

3. - Արդ, հիմա հարց կ'ելլէ թէ ի՞նչ արժէք կը ներկայացնեն Անասեանի մէջբերած 1553-1562 թուականներու յիշատակարանները, ի նպաստ իր առաջարկ-

90 Ալպոյանեան, Անդ, էջ 305-6, 308 յջ.:

91 Անասեան, Անդ, էջմիածին 1956, Ը-Թ, էջ 97

92 Անդ:

93 Անդ:

94 Անդ, էջ 97-98:

կութեան: Անշուշտ ան կը պաշտպանէ թէ այդ բոլոր յիշատակարանները կը վկայեն Ստեփանոս Սարմատեցիի՝ իր պաշտօնին մէջ տեւողութիւնը այդ թուականներուն⁹⁵: Բայց մենք ստիպուած ենք մերժել այդ, նկատած որ մէջբերուած յիշատակարաններէն ոչ մէկը Ստեփանոսի անունին քով Սալմաստեցի մականունը ունի: Հետեւաբար այդ յիշատակարանները մեր պարագային համար արժէք չեն ներկայացնէր:

4. - Ուրիշ հարց մըն ալ՝ Սարմատեցի եւ Արքեպիսկոպոս մականուններու նոյնութիւնն է: Անասեան 1553-1562 թուականներու յիշատակարաններու մէջ գտած էր Սարմատեցի մականունը, սակայն 1562-1567 թուականներու յիշատակարաններուն մէջ գտած էր Արքեպիսկոպոս մականունը, որ 1562ին այցելած էր Լեհաստանի հայ կեդրոնները: Գիտենք թէ Կամենիցի Տարեգիրքի խմբագրողը զարմանքի արտայայտութիւն ունեցած էր այդ դէպքին համար, ըսելով թէ մինչեւ այն ժամանակ էջմիածնի կաթողիկոս մը այն կողմերը երբեք եկած չէր⁹⁶: Անասեան ալ իր կարգին կը զարմանար խմբագրողին զարմանքին վրայ, քանի որ Ստեփանոս Սարմատեցի 1551/52 թուականին Լեհաստան դառնում էր: Չկարելի է նախադրել առեղծուածը⁹⁷, ան նախադրել քաղաքային առեղծուածը, ան հարցը պարզելով՝ Արքեպիսկոպոս այցելութեանը 1562ին կը փոխադրէ 1552ին, նոյն թիւնը 1562ին կը փոխադրէ 1552ին, նոյն թիւնը կը յանդիպի այն եզրակացութեան: Ասով կը յանդիպի այն եզրակացութեան՝ թէ Սարմատեցի եւ Արքեպիսկոպոս միեւնոյն անձնաւորութիւնն են, երկու մականունով: ասոր ալ փաստ կը գտնէ Սարմատեցիի նախ քան կաթողիկոսանալը՝ Ալիստայի վանքին մէջ ուսուցիչ կամ առաջնորդ եղած ըլլալը: Անշուշտ Անասեանի աչքէն չի վրիպիր թէ Առաքել Դաւրիթեցի այս նոյնութեան անտեղեակ եղած է. վասնորից, անոր ժամանակագրութիւնը ուշ ժամանակ կազմուած է, ինչպէս ուրիշ ժամանակագիրներ, որոնք իրմէ կախում ունին, և չեն կրնար տեղեակ ըլլալ

Ստեփանոս Սարմատեցիի եւ Արքեպիսկոպոսի անձեր ըլլալու պարագային:

Մենք կ'ընդունինք թէ Դաւրիթեցին կարող էր անտեղեակ ըլլալ Սարմատեցի-Արքեպիսկոպոսի նոյնութեան մասին. թէեւ արդոյ հեղինակը կը պաշտպանէր թէ Դաւրիթեցի իր գաւազանագիրքը պատրաստած է ժամանակակից յիշատակարաններու հիման վրայ, եւ հետեւաբար այդ ցանկը եւ անոր տեղեկութիւնները արժէքաւոր են. բայց չենք կրնար ընդունիլ որ Ժ. Գ. զարու գրիչները եւ ժամանակագիրները, Դաւրիթեցիի պէս անտեղեակ եղած ըլլան: Արդ անոնք, ինչպէս տեսանք եւ պիտի տեսնենք դեռ, յատուկօրէն կը խօսին երկու Ստեփանոս կաթողիկոսներու մասին, մին Սարմատեցի եւ միւսը Արքեպիսկոպոս: Նոյնը կ'ընեն Չամչեան եւ Օրմանեան⁹⁸: Իսկ Անասեան առաջինն է որ հնարած է այս նոյնութիւնը երկու կաթողիկոսներու:

5. - Գալով ուրեմն 1562-1567 թուականներու յիշատակարաններուն, այս բոլորը կը յիշեն միայն Ստեփանոսը՝ Արքեպիսկոպոս մականունով, առանց երբեք շփոթելու Սարմատեցիի հետ: Ուրեմն, յայտնի է որ ժամանակակից գրիչները լաւ կը զանազանէին Արքեպիսկոպոս Սարմատեցիէն: Ասոր նկատմամբ կը յիշատակենք Լեհաստանի Հայոց մէկ նամակը (չարագրութեամբ Մինաս Տիւրիկիցիէն): Անոնք 1572ին կը ներկայացնեն էջմիածնի կաթողիկոս Միքայէլ Սերաստացիին խնդրանք մը, ուր ի միջի այլոց կը խնդրեն ամուսնական հարցին մէջ առանձնաշնորհումներ, մերձաւոր արեւակիցներու աստիճանին մեղմացումի վերաբերեալ, որ ըստ իրենց

95 Անդ, էջ 98:

96 Ալիստայի, Կամենից, էջ 32:

97 Սակայն քաղաքային կարելի է տեսնել Ալպոյանեանի յօդուածին մէջ. Անդ, էջ 309-310:

98 Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 524-525: Օրմանեան, Ազգապատմութիւն, Բ, էջ 2263-65: Ormanian, L'Eglise arménienne Paris, 1910, p. 178.

ըսածին «Ի մեր յառաջին հարցն աւանդութիւնն կայ ի մեր մէջն Սարմատեցուն ի վեր»⁹⁹ :

Միւս կողմէն գիտենք թէ Ստեփանոս Արենջեցին (որ Անասեանի համար Սարմատեցիի հետ նոյն անձն է) մինչեւ 1575 ողջ էր․ այսպէս կը նշանակեն զոնէ Զամ-հեան եւ Ալպոյաճեան¹⁰⁰ : Արդ ի՞նչպէս կըրնային Լէոպոլտոյ հայերը յիշեալ տողերը գրել Միքայէլ Կաթողիկոսին, աւելցնելով «Սարմատեցուն ի վեր», եթէ այս վերջինս տակաւին ողջ էր, եւ այդ՝ Արենջեցի մականունին տակ․ մանաւանդ որ Մինաս Տիմրիկցի, որ իր յիշատակարանին մէջ (1565 եւ 1567 թուականներուն) կը յիշէ Ստեփանոս Արենջեցին, յիշեալ նամակին մէջ (1572ին) կը վերջիւնէ Ստեփանոս Սարմատեցին : Ուստի պէտք է երկարացնենք թէ Լեհաստանի հայերն ալ լաւ գիտէին զանազան Սարմատեցիին Արենջեցիէն : Հետեւաբար Սարմատեցի – Արենջեցի նոյնութիւնը պատմական իրողութիւն ըլլալէ զուրկ է :

Այսպէս կ'իյնայ նաեւ հինգերորդ եւ վերջին փաստը, զոր արդոյ Անասեան իրը հիմ դրած էր իր առաջարկութեան :

* * *

Անասեան սկսելով իր ուսումնասիրութեան Բ․ մասը, հարց կը դնէ անմիջապէս թէ «Ի՞նչ արժէք են ներկայացնում Ստեփանոս Սարմատեցու Լիովում մեռած ու թաղուած լինելուն վերաբերեալ տուեալները»¹⁰¹ : Որուն նախ կը պատասխանէ՝ թէ Ռոջրայի ժամանակագրութեան վկայութիւնը ոչ մէկ արժէք չի ներկայացնէր ներկայ հարցին մէջ, որովհետեւ հեղինակը ԺԲ․ դարուն է եւ իր գրածը պարզ մեկնութիւնն է Ստեփանոս Ե․ի դամբանի արձանագրութեան : Ապա կ'աւելցնէ․ «Կաթողիկ Ռոջրայի համար շատ բնական բան էր որ կաթողիկոսը – կատարեալ զհնազանդութիւն եւ դոխտ լուր – գայ ի Լէոպոլիս, որտեղ եւ – մեռանի յայտն մօր – այսինքն 1551 թուականին – որպէս ցուցանէ գերեզմանաքարին նորա գիրն» : Ռոջրայի այս հատ-

ուածն, ուրեմն, որպէս աղբիւր զուրա է գալիս շարքից»¹⁰² : Իսկ մատենագրական միւս վկայութիւնները, կը գրէ Անասեան, «որ կամենիցեան տարեգրութիւնն է տալիս եւ Լիովի տապանաքարը, իրենց ծագումով միեւնոյն ժամանակի եւ շարքի են պատկանում» : Ուստի ան կ'անցնի զատ զատ քննելու այս երկու պատմական աղբիւրներու արժէքը, եւ հետեւեալ եզրակացութեան կը յանդի : Ըստ կամենեցեան տարեգրութեան, ինչպէս գիտենք, Սարմատեցին – եկն ի Ֆրանգիստանու ի Լով քաղաքն եւ անդ վաղճանեցաւ»¹⁰³ : «Զգիտենք, կը յարէ մեր յօդուածադիրը, թէ տարեգրութիւնը սփռուելից է վերցրել այդ տեղեկութիւնը․ բայց այս հարցի պատասխանը կարելի է որոնել այն հարցի մէջ՝ թէ ի՞նչպէս կազմուել է կամենեցեան տարեգրութիւնը, որպէս ամբողջութիւն» : Եւ կը պատասխանէ թէ «Կամենեցեան տարեգրութիւնը կազմել են Կամենեցի աւագերէցները : Նրա առաջին մասի կազմող, Յովհաննէս քահանան, աւագերիցութիւն է արել 28 տարի, սկսած 1577 թուականից, որով նա հեղինակն է միայն 1577–1605 թուականների շրջանի գէպքերի․ ուստի 1577 թուականից առաջուայ գէպքերը ուրիշ աղբիւրից են» : Ապա կ'անցնի թուելու քանի մը օրինակներ, ուր 1560, 1561, 1562 տարիներուն պատմութեան գէպքեր կրկնուած են յաջորդող թուականներուն տակ․ որմէ կ'երկարացնէ․ «Կրկնութիւնները ցոյց են տալիս որ նոյն տեղեկութիւնը քաղուած է տարբեր տեղերից, զուցէ տարբեր ժամանակներում․ ուստի եւ տարբեր ձեռքերով» :

99 Ալիշան, Կամենից, էջ 228–231 :

100 Չաւչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 524–525 եւ յաւել․ էջ 110 : Ալպոյաճեան, Ստեփանոս Սարմատեցի, Սիւն 1931, էջ 310 : De Morgan, Histoire du peuple arménien, p. 365.

101 Անասեան, Գիտություններ, էջմիածին 1956, ԺԱ–ԺԲ, էջ 71

102 Անդ :

103 Ալիշան, Կամենից, էջ 19 :

«Նոյնը պէտք է տալ, կը գրէ ան, տարեգրութեան մէջ զանազան հակասութիւններ չմտնի, որոնցից ամենագլխաւորը հենց այն իսկ է՝ որ մինչեւ 1552 տարեգրութիւն տակ մեր կողմից խնդրոյ առարկայ հաստատուած Ստեփանոս Սարմատեցու մասին աւելում է թէ նա – «եկն ի Ֆրանգիստանու ի Լով քաղաքն» – միւս կողմից 1562 տարեգրութիւն տակ գրուած է թէ – մինչեւ յայտն կաթողիկոս ի յայտ աշխարհս բնաւ ոք չէր տեսեալ»¹⁰⁴ : Ասով Անասեան կ'ուզէ մեզ համոզել թէ Կամենիցի տարեգրութեանց մէջ անճշտութիւններ կան եւ մինչեւ իսկ հակասութիւններ սպրդած են : Եւ հետեւաբար, առաջ երթալով իր պատճառարանութեան մէջ, կը գրէ․ «Հաշուի առնելով այս իրողութիւնը՝ մենք գտնում ենք որ Ստեփանոս Սարմատեցի Լիովում մահացած լինելուն վերաբերող տեղեկութիւնը Տարեգրութիւնում, նոյնպէս ուրիշ աղբիւրից պիտի լինի»¹⁰⁵ : «Ըստ ինքեան, այսպէս կը շարունակէ ան, զարմանալի ոչինչ չկայ եթէ մենք փոխառութիւններ ենք գտնում 1577 թուականին մի հեղինակի երկում, որի բովանդակութիւնը հասնում է առնուազն ԺԵ․ դարի սկիզբը : Դա շատ էլ բնական է : Սակայն այստեղ, գիտել կու տայ ան, կայ ուրիշ հարց : Այստեղ նկատուող եւ կամուտ տարբերը արդեօք նոյնինքն Յովհաննէս քահանայի կողմից կատարուած փոխառութիւններ են, թէ հետագայում մի այլ խմբագրողի կողմից կատարուած ներմուծումներ : Սա կարեւոր պարագայ է : Կամենեցեան տարեգրութիւնը, այնպէս որ կայ այսօր նա մեր տրամադրութեան տակ, Հ․Ղ․ Ալիշանի հրատարակութեամբ, ինքնին շատ վստահելի հանդամանքներ չի ներկայացնում : Նախ բնագրի ձեռագիրը, որը վեհապետի Միթրաբեան մատենագրարանումն է գտնուում, անմիջապէս փոխառութիւնն է : Բայց առաջին թերթից, պահպանում են նաեւ միջից շատ թերթեր : Նիւթեր միշտ չեն հետեւում ժամանակագրական ուղիղ կարգի, այլ ցրուած են եւ առաջ, որով հրատարակիչն (Հ․ Ալիշան) ստիպուած է եղել ժամանակա-

գրական դասաւորում կատարել» : Ուստի ան կ'եզրակացնէ․ «Այս հանգամանքներում՝ Տարեգրութեան առաջին մասում նշուող օտար հաստատումները կարող են որքան Յովհաննէս քահանայի ձեռքով կատարուած փոխառութիւններ լինել, նոյնքան աւելի հետագայ շարունակողների ու խմբագրողների գործ լինել : ... Իսկ որոշ նկատումներ մեզ թոյլ են տալիս շատ բարեմիտ չլինել այս խնդրում : Այս խնդրում մեզ օգնութեան է գալիս ժամանակն ինքը»¹⁰⁶ :

Անասեան կ'անցնի ապա ցոյց տալու թէ Լեհաստանի հայ զաւուր ժ․Գ․ դարէն սկսեալ մինչեւ ԺԵ․ դարու սկիզբները էջմիածնի կաթողիկոսի իրաւասութեան ենթակայ էր, մինչեւ որ (1626ին) Թորոսովիչ կաթողիկոսը լատինացաւ եւ բռնի ու սպորինի միջոցներով բաժնեց իր հօտը հայ ազգային եկեղեցիէն ու ենթարկեց Հռոմէական եկեղեցւոյն՝ հակառակ ժողովուրդի կամքին : Եւ «այս երկարամեայ պայքարի ընթացքում, պայքար՝ որին հետագայում Հռոմի Պրոպագանդայի լատին գործակալները իրենք լծուեցին անձամբ, հարկ եղաւ բռնի միջոցների հետ – զործի դնել նաեւ – զաղափարաբանական ուժեղ պայքար, որին մէջ առհասարակ լաւ էին մարդուած Հռոմի գործակալները» : Անոնք, կ'ըսէ Անասեան, սկըսան բացատրել թէ Հայկական եկեղեցին ոչ թէ հերետիկոսական եկեղեցի էր, այլ հերձուածող (բաժնուած) եկեղեցի : Ուստի հարկ էր կրկին միացնել Ընդհանրական եկեղեցւոյն, որուն կեդրոնը Հռոմն էր : «Ըստ Փրանսայի Հ․ Պիտուի, օրինակի համար, որ այդ առեւ Լեհահայոց առաքելութեան եւ Լիովի Հայոց պապական զարոյցի զեկաւարն էր, Հայկական եկեղեցին Գրիգոր Լուսաւորչից սկսեալ մինչեւ Ներսէս Աշտարակեցի (Գ–Ձ դար) միութեան մէջ էր եղել Ընդհանրական ե-

104 Անասեան, Անդ, էջ 71 :

105 Անդ, էջ 71–72 :

106 Անդ, էջ 72 :

կեղեցու հետ»։ Իսկ Վարդան Յունանեան արքեպիսկոպոսը կ'ըսէր, թէ Պրոպագանդայի գլխավոր իրենց ցոյց են տուել հայերի կողմից գրուած բազմաթիւ նամակներ «ի կաթողիկոսաց եւ յեպիսկոպոսաց եւ յայլոց»¹⁰⁷։

«Այսպէս, ուրեմն, կը յարէ մեր պատմագէտը, մեծ նշանակութիւն ունէր պատմական անցեալը ժէ. դարում լեհահայոց մէջ տարուող նոր շարժման գաղափարական հիմնաւորման համար։ Ըստ այդմ, ի հարկ է, շատ յայտնի մարդիկ էին բռնել Հռոմի ճանապարհը, սկսած կաթողիկոսներէն. եւ դրանց մէջ չէ՞ր եղել նաեւ Ստեփանոս Սարմատեցիին, որ ըստ Պետրոս Արեւելոսի՝ Մատոյց իր հնադանդութիւնը Պօղոս Գ. Պապին եւ կատարեց գաւառութիւնը, Եւդենիոս Գ. ի ժամանակ եղած Փլորենտեան ժողովքին համաձայն»¹⁰⁸։ Այս հիման վրայ, կը շարունակէ գրել Անասեան, լեհահայ նորագործ գաղութի մէջ պէտք է ստեղծուած լինէր որոշ աւանդութիւն այն իմաստով թէ կաթողիկոսութիւնը նորամուտ բան չէր, ինչպէս ընդհանրապէս հայկական իրականութեան մէջ՝ նոյնպէս եւ լեհահայ կեանքում»։ Այս աւանդութեան հիման վրայ պիտի ստեղծուէր պատմական գրաւոր յիշատակարան մըն ալ։ Ահա թէ ինչ պարագաներու մէջ Կամենիցեան տարեգրութիւնը ստացաւ իր վերջնական խմբագրութիւնը, որուն համաձայն՝ Ստեփանոս Սարմատեցի մեռած ըլլալու էր 1552ի Յուն. 14ին։ «Ահա այսպիսով մենք գիտումնաւոր մուծում ենք համարում, կը գրէ Անասեան, Կամենեցեան տարեգրութեան տուեալ հաստատւած՝ ժէ. դարի մուկեանդ կաթողիկ խմբագրողներին ձեռքով. եւ ոչ երբեք նոյնինքն Յովհաննէս քահանայի ձեռքով կատարուած փոխառութիւն, որպիսի իրողութիւն անկարելի է ենթադրել. քանի որ մենք այժմ ստույգ գիտենք թէ Ստեփանոս Սարմատեցիին չէր մահացել 1551 կամ 1552 թվականին Լվովում»¹⁰⁹։

Այս, մեր արդոյ յօդուածագիրը, անցնելով Ստեփանոս Սարմատեցիի տապա-

նաքարի վկայութեան, կը յայտարարէ թէ. «Մենք նոյնը կ'ասենք նաեւ տապանաքարի համար, որովհետեւ այստեղ է նաեւ Լվովի տապանաքարի ծնունդը»¹¹⁰։ Եւ հարց կը գնէ թէ ինչո՞ւ Ստեփանոս Ե. այդ տապանաքարի վրայ լատին եկեղեցական զգեստներով ներկայացուած է ու լատիններէն լեզուով գրուած է անոր արձանագրութիւնը, եւ ոչ հայերէն։ Հարցը իր կարեւորութիւնը ունի, կ'ըսէ ան, որովհետեւ՝ եթէ նոյն իսկ պահ մը ընդունէինք որ յիշեալ կաթողիկոսը խոստացուած օղնութիւններու փոխան յանձն առած ըլլայ, բացի վարդապետական ու ծիսական զիջումներից, Հռոմի պարտադրանքի վրայ, նաեւ լատին եկեղեցական զգեստները, անկարելի է երեւակայել որ Ստեփանոս նախ քան ազգին հաւանութիւնը ընդունելու՝ սկսած ըլլայ գանոնք կերարկել ինքնազուլս որոշումով։ «Այս գիտողութիւնը այնքան է տեղին, կը գրէ Անասեան, որքան մեղ յայտնի է որ, օրինակ, ըստ վկայութեան Գուարտէր Արեւելոսի, նա գեռ Հռոմում գտնուած ժամանակ, երբ նրան առաջարկուել էր ջուր խառնել բաժակի մէջ, նա դժուարացել է ինքնազուլս ընդունել այդ, եւ խոստացել էր որ կ'աշխատի հետագայում այդ մասին ձեռք բերել իւրաքանչիւր հաւանութիւնը»^{110*}։ «Ուրեմն, կ'եղրակացնէ

107 Անդ, էջ 73։

108 Անդ։

109 Անդ։

110 Անդ։

110* Դիտել կը տանք որ յարգելի յօդուածագիրը Արեւելոսի խոսքերուն ոյժը փոխած է։ Մենք հոս կու տանք անոնց իսկական թարգմանութիւնը, որոնց մէջ ակնարկ չենք գտներ թէ Ստեփանոս զգեստութիւն զգացած ըլլայ ինքնազուլս ընդունելու եղած առաջարկը, այլ պարզապէս թէ հաւանած է։ Ահա անոր խոսքերը. «Եւ որովհետեւ պատարագի խորհուրդին մէջ (Ստեփանոս) գիտիին ջուր չէր խառնել, հաւանեցաւ որ թէ ինք եւ թէ իրեն երկուսն քան եօթը Եպիսկոպոսներ ասկէ վերջ հռոմէական եկեղեցւոյ սովորութեան համաձայն, ջուր պիտի խառնեն գինին»։ «Et cum in sacrificio Missae non

յարգելի հեղինակը, անհնարին է որ նա լատինական եկեղեցական տարազի դործածութեան սկսած լինէր գեռ Հայաստան էլ հասած. ուստի նաեւ անհնարին բան էր որ եթէ նոյն իսկ նա Լվովում մեռած ու թաղուած լինէր, եւ եթէ նոյն ժամանակն էլ նրա հոգաւորյալի վրայ քար գետեղուէր, այդ քարի վրայ հայերը նրան ներկայացնէին մի այնպիսի տաքաղով, որ նա չէր կարող կրել եւ չէր կրում։ Եւ սա արդէն ինքնին բնական ապացոյց է այն բանի, որ այդ տապանաքարը չի կարող վերաբերուել Ստեփանոս Սարմատեցուն եւ ժ. 2. դարին»¹¹¹։

Ուրիշ պատճառարանութիւն մըն ալ առաջ կը բերէ մեր արդոյ յօդուածագիրը այս հարցի նկատմամբ. այսինքն թէ «Նիւթական եւ հոգեւոր մշակոյթի ամէն մի յուշարձան, անկախ այն նպատակից, որին նուիրուած է նա, իր ձեռով արտաշայտում է այն ժամանակը եւ այն միջավայրը, որոնց մէջ ծնունդ առած է։ Այսպէս եւ Լվովի տապանաքարը կարող է պէս եւ Լվովի տապանաքարը կարող է արտաբերութիւնը լինել միայն ու միայն յարաբերութիւն լինել միայն ու միայն լատինների ձեռքով եւ բռնի միջոցներով»¹¹²։ Նիկոլ արքեպիսկոպոսին միջոցաւ կնքուած միութիւնը, կը բացատրէ նա Անասեան, պատիր ու խախուտ էր համարում լատինների կողմից։ Միութիւնը իրական հիմքերի վրայ գնելու հարձակում Պրոպագանդան Լեհաստան է մար՝ Հռոմի Պրոպագանդան Լեհաստան է մարձարկում այսպէս կոչուած մի «առաքելական միսիա», որը Լվով է հաստատուում 1664ի սկիզբները։ Առաքելութիւնը կազմուած էր երկու թէպղիեան կրօնաւորներից, Կալանոս եւ Պիտու, որոնք Պրոպագանդայի օղնութեամբ՝ դպրանոց միջոցով հայկական ծէսը։ Կալանոս շուտով կը մեռնի (1666ին). բայց Պիտուն շարունակեց գործել ամենայն եռանդով ու յաջողութեամբ, ամէն ինչ անելով Նիկո-

լի անունով ու հրամանով, որ հնարքով մը Հռոմ զրկուած էր 1668ին, եւ հոն արգելափակուած մինչեւ 1674¹¹³։

Ուստի, կ'եղրակացնէ Անասեան. «Մեր կարծիքով ահա այս ժամանակ եւ միջավայրի ծնունդ է՝ այն ամբողջովին լատինական յատկանիշներով գաղափարաբար. . . . այս շրջանում կենսագործել էր Լվովի հայոց արքեպիսկոպոսական աթոռանիստ եկեղեցում վիճակաւ յուշարձան կանդնելու գաղափարը. մի յուշարձան՝ անհրաժեշտ յատկանիշներով, իր տարած պաշարի գաղափարական հիմնաւորման նպատակով, Ստեփանոս Սարմատեցու անուն շուրջ ստեղծուած աւանդութիւնն ամբողջովին եւ յաւերժացելու համար. . . . Այս հիման վրայ Ստեփանոս Սարմատեցու անունով Լվովում գտնուող տապանաքարը հանդիսանում է պատմական կեղծիք»։ «Ահա թէ ինչ կարող էինք ասել, կը գրէ Անասեան, Լվովի տապանաքարի եւ նրա հետ միասին Կամենեցեան տարեգրութեան խնդրոյ առարկայ հասնումի ծագման մասին, այն բանից յետոյ, երբ մի շարք փաստեր մեզ ասում են թէ յիշեալ թուականներին՝ Ստեփանոս Սարմատեցին չէր մահացել Լվովում եւ չէր թաղուել այնտեղ»¹¹⁴։

* * *

Կը համարինք թէ այս անգամ ալ հարկ է պահ մը կանդ առնել՝ ինչ ինչ նկատողութիւններ եւ ճշտումներ կատարելու համար Անասեանի գրութեան այս երկրորդ մասին։

Պատուական հեղինակը համարելով որ իր գրութեան առաջին մասին մէջ ապացուցած ըլլայ թէ Ստեփանոս Ե. կաթո-

misceret aquam vino, consentit, ut tum ipse, quam sibi subiecti 27 episcopi, in futurum, iuxta morem Ecclesiae Romanae, vino aquam miscerent» Անասեան, Անդ, էջ 74։

111 Անդ, էջ 74։

112 Անդ։

113 Անդ, էջ 75։

114 Անդ, էջ 76։

ղիկոս մեռած է՝ 1551/2 թուականին, այժմ հարց դրած է՝ թե՛ ի՞նչ արժեք կրնային ներկայացնել պատմական այն վկայությունները, որոնք հակառակը կը փաստեն: Այսպիսի հարց, ըստ ինքեան, աւելորդ պէտք էր ըլլաւ. բայց յարգելի հեղինակը դիտմամբ դրած է հարցը, որպէսզի առիթը ունենայ յատկապէս ապացուցանելու վերոյիշեալ պատմական յիշատակարաններու կեղծիքը, հետեւեալ ձևով:

1. — Կամենիցեան տարեգրութեան մասին, որուն համեմատ Ստեփանոս Սալմաստեցի Հոռոմ եկած եւ հաւատոյ դաւանութիւնը կատարելէ վերջ՝ Լէոպոլտսկի գացած է ու հոն մեռած, Անասեան հետեւեալ պատճառարանութիւնը կ'ընէ: Առաջին մասին մէջ առաջ բերուած վկայութիւններով փաստուեցաւ որ Ստեփանոս Սալմաստեցին մեռած ու թաղուած է Լէոպոլտսկի. ուստի Յովհաննէս քահանան, Կամենիցեան Տարեգրութեան հեղինակը, չէր կրնար հակառակը դրած ըլլալ:

Հետեւաբար ան կեղծիք մըն է, «Հոռոմի Պրոպագանդայի գործակալներէ» յերկրում:

— Որուն կը պատասխանենք: Սխալ է արդոյ յօդուածագրին պատճառարանութեան նախադրեալը: Վասնզի, ինչպէս վերեւ տեսանք, առաջին մասին մէջ յիշատակուած վկայութիւնները անվիճելիօրէն կը փաստեն թէ Ստեփանոս Սալմաստեցի իսկապէս մեռած է ու թաղուած Լէոպոլտսկի մէջ: Ուստի, Կամենիցեան Տարեգրութիւնը պատմական իրողութեան կը համապատասխանէ: Երկրորդ, նկատելի է որ «Հոռոմի Պրոպագանդայի գործակալները», այսինքն Թէոփիլեան միաբնակները, պէտք չունէին նման խարէութիւններու գիմելու՝ ցոյց տալու համար որ Հայոց եկեղեցին անցեալ դարերուն միացած էր Բողոքական եկեղեցւոյ: Այդ իրողութիւնը ծանօթ էր անոնց ոչ միայն Պարոնիոսի եւ Ռէյնալտի Տարեգրութիւնէն, այլ նաեւ Կալանոսի «Միադիրքներէն», այլ նաեւ Կալանոսի «Միաբանութիւն եկեղեցւոյն Հայոց ընդ Հոռոմի»

մայ եկեղեցւոյն» գրքէն, զոր Գարրիէլ Կապուշ (Կապուշուքի), նոյն առեւտան Լէոպոլտսկի երեւելի հայերէն մէկը, թարգմանած էր Լեհերէն¹¹⁵: Լեհաստանի հայերը շատ լաւ գիտէին որ Էջմիածնի վերջին չորս կաթողիկոսները այն է Մելքիսեթ, Մովսէս Գ. Տաթևացի, Փիլիպպոս Գ. եւ Յակոբ Գ. Զուգայեցի, զանազան նամակներ ուղղած էին Հոռոմի քահանայապետներուն եւ անոնց յայտնած էին իրենց հպատակութիւնը¹¹⁶: Ուստի չենք գիտեր թէ ի՞նչ բանի պիտի ծառայէին այս մեքենայութիւնները, զոր Անասեան, առանց փաստի, կը վերագրէ Հոռոմի գործակալներուն: Իսկ ինչ որ Վարդան Յունեանի վկայութեան կը վերաբերի, թէ ան Հաւատոյ Տարածման Ս. Ժողովքի գլխաւորն էր, տեսած ըլլալ բազմաթիւ նամակներ հայ կաթողիկոսներէ դրուած եւ զրկուած Հոռոմի Պապերուն, պէտք է ըսենք որ ոչ միայն մենք անձամբ տեսած ենք, այլ նոյն իսկ Փարոս (հրտ. Մոսկուա) ամսագիրը ժամանակին հրատարակած է 21 նամակներու անկատար ցուցակ մը, զրուած հայ կաթողիկոսներէ ու եպիսկոպոսներէ 1145-1350 եւ 1563-1727 թուականներու ընթացքին¹¹⁷: Աւելորդ կը նկատենք յիշել եւրոպական լեզուներով եղած զանազան հրատարակութիւնները, ինչպէս եւ Ռայնալտի, Մանսի, Մարտէնէ Դուրանդի եւ Տաւուուի հրատարակած հաւաքածոները, որոնց մէջ կարեւոր է գտնել վերոյիշեալ կաթողիկոսներու նամակները եւ անոնց պատասխանները:

2. — Անասեան նոյն պատճառարանութիւնը կ'ընէ նաեւ Լէոպոլտսկի Հայոց եկե-

115 Pawinski A., Dzieje zjednoczenia Ormian polskich z Kościołem rzymskim, Warszawa 1876, p. 34.

116 Ալիկեան, Մովսէս Տաթևացի, էջ 286, 332: Քերդեան, Յակոբ Զուգայեցի, էջ 116: Petrowicz, op. cit. p. 58, 114. Zacharyasiewicz, Wiadomosc o Ormianach w Polsce, p. 42, nota.

117 Փարոս, (Մոսկուա 1873), Տեղաւ, Բ., էջ 3-4, 6-13:

ղեցւոյ դամբանի արձանագրութեան մասին: Ըստ իրեն, կարգ մը փաստեր կը վերադառնան թէ Ստեփանոս Սալմաստեցի մեռած ու թաղուած է 1551/2 թուականին Լէոպոլտսկի մէջ: Ուստի նոյն քաղաքին հայերը չէին կրնար յիշեալ արձանագրութիւնը գտնել Ստեփանոսի դամբանին վրայ, եւ չէին կարող մանաւանդ, ներկայացնել զինքը լատինական զգեստներով: Հետեւաբար Հոռոմի գործակալներն ըրած ըլլալու են: Յիշաւի անոնք արդարացիութեամբ 1664-1674 ընթացքին տեղի ունեցած Լեհահայոց բռնի կաթողիկոսութեամբ, նոյն եկեղեցւոյ մէջ կանգնել տուած են Ստեփանոսի յուշարձանը, ներկայացնելով զինքը լատինական զգեստներով, յաւերժացնելու համար սուտ աւանդութիւնը՝ թէ շատ մը հայ կաթողիկոսներ, եւ անոնց մէջ Ստեփանոս Սալմաստեցին, կաթողիկէ էին:

— Հոս ալ նոյն պատասխանը պիտի տանք արդոյ յօդուածագրին: Սխալ է Անասեանի պատճառարանութեան նախադրեալը, ինչպէս վերեւ ցոյց տուինք: Ուստի սխալ է նաեւ հետեւորդը: Որովհետեւ արդէն Լեհ երեւելի պատմագէտը, Ստարովսկի, զոր վերեւ յիշեցինք, իր պատմական գործին մէջ (հրտ. 1656 թ.) մէջ կը բերէ Ստեփանոս Ե. ի դամբանը իր մէջ Էջմիածնի քան «Հոռոմի գործակալներուն» Լեհաստան ժամանումը, գոյութիւն ունէր Ստեփանոսի դամբանաքարը Լեհաստանի եկեղեցւոյ մէջ¹¹⁸: Արուեստի եւ հայոց եկեղեցւոյ մէջ¹¹⁹: Պրոպագանդի, իր բեւելի պատմագիր, Պրոպագանդի, իր կարգին, կը համարի որ յիշեալ դամբանաքարը ... չենուած ըլլալ անպայման թ. 2. դարու կէսերը¹²⁰: Ասկէ զատ, պէտք է նկատի առնել որ եթէ Թէոփիլեան միաբնակները նման խեղճ միջոցներու գիմած ըլլալին՝ պարզապէս ապացուցանելու համար թէ Հայոց եկեղեցւոյ մէջ շատոնց մօտը գտած էր կաթողիկէութիւնը, այժմ փաստած պիտի ըլլային միայն, թէ իսկ ան ամենատարրական ողջմտութենէ: Վասնզի ոչ միայն Կալանոսի «Միա-



Ստեփանոս Սալմաստեցիի դամբանաքարը՝ Լէոպոլտսկի Հայոց Մայր եկեղեցւոյ աւագ խորանին աջակողմը

բանութիւն Հայոց եկեղեցւոյն ընդ Հոռոմի եկեղեցին» (հրտ. հայերէն եւ լատիներէն լեզուներով), այլ նաեւ հայերէն ու լատիներէն բազմաթիւ հրատարակութիւններ եւ աղբիւրներ կային արդէն, համոզելու Լեհաստանի հայերը՝ իրերու պատ-

118 Starowolski Monumenta Sarmatorum..., p. 300.

119 Piotrowski J., Katedra ormianska we Lwowie..., 1925, p. 27, e tav. 35.

մական ճշմարտութեան, ինչպէս արդէն համոզուած ալ էին¹²⁰։ Ուստի Ստեփանոս Սարմատեցիի Լէոպոլտոյ մէջ թաղուած ըլլալը կամ ոչ՝ կարեւորութիւն մը չունէր։ Կարեւոր էր իր եւ իր նախորդներու հաւատքը։

Սակայն արդոյ մեր հեղինակը կը ցաւի որ արձանագրութիւնը եւ կաթողիկոսին զղեստաւորումը լատինական ձեւով են. եւ կը հաւատայ թէ կարելի չէ մտածել որ եթէ նոյն իսկ այդպիսի զղեստներ ըստացած ըլլար ան՝ կարենար գործածել առանց նախապէս «ազդին» հաւանութիւնը ստանալու։

Մենք ալ կ'ընդունինք որ հայերէն արձանագրութիւն մը աւելի պիտի պատշաճէր՝ քան լատիններէնը։ Բայց եկեղեցական զղեստներու նկատմամբ պէտք է նըկատել հետեւեալները։

Թագը կամ Խոյրը — (Mitra) Ըստ Հ. Վ. Հացունիի, 1177ի տառնները տակաւին գործածական չէր մեր մէջ լատինական ձեւով թագը¹²¹։ Ղուկիոս Գ. (1181-1185) Պապն է որ 1184ին հաս մը զրկեց իրր նուէր Գրիգոր Գ. Տղայ կաթողիկոսին¹²²։ Իսկ 1202ին ալ Իննովկենտիոս Գ. (1198-1216) 14 թագեր նուիրեց Կիլիկիոյ 14 հայ եպիսկոպոսներուն¹²³։ Հուսկ 1239-ին Գրիգոր Թ. Պապը (1227-1241) շատ յարգի թագ մը նուիրեց Կոստանդին Ա. (1220-1267) կաթողիկոսին¹²⁴։ Գիտենք որ Կոստանդին Բ. կաթողիկոսն ալ գործածած է թագը, որ այլեւս հայ ծիսական

զղեստներու մաս կը կազմէր։ Հետեւաբար հռոմէական կամ լատինական թագը հայ եկեղեցւոյ մէջ գործածութեան մըտաւ Կիլիկեան թագաւորութեան շրջանին¹²⁵ ու մնաց մինչեւ մեր օրերը, ինչպէս ցոյց կու տայ հայկական մանրանկարչութիւնը։ Ուստի Գրիգոր Է. Անուարդեցի (1292-1307) կաթողիկոսը կրնար իրաւամբ ըսել թէ «... մեր ի հռոմայ սուրբ եկեղեցւոյն ունիմք զմիթրն»¹²⁶։

Շուրջադր — Հ. Վ. Հացունիի համաձայն, հայ կաթողիկոսները բարձրագոյն *πολυστοχρος* շուրջադր փոխ առած են յոյն Պատրիարքներէն։ Այդ շուրջադր, կ'ըսէ նոյն հնագէտ հայրը, արդէն գործածութեան մէջ էր ներսէս Շնորհալիի օրով։ Նոյնպէս Կոստանդին Բ. կաթողիկոսի եւ յաջորդներու ժամանակ կը գործածուէր, ինչպէս կ'երեւի հայկական մանրանկարներու մէջ¹²⁷։

Պալիումը — Պատմութենէն ծանօթ է որ հայ կաթողիկոսները Կիլիկեան շրջանին ընդունեցան Պալիումը՝ Հռոմի Քահանայապետներէն, ինչպէս նաեւ ուրաբը, հովուական գաւազանը եւ մատանին։ Այսպէս, օրինակի համար, Իննովկենտիոս Բ. (1130-43) Քահանայապետը, 1141, նուէր զրկեց Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսին Պալիումը¹²⁸։ Յետոյ Ղուկիոս Գ. 1184ին կը զրէր Գրիգոր Գ. Տղային. «Քեզի, Պատուական եղբայր եւ կաթողիկոս, զրկեցի այս սուրբ եկեղեցւոյ զարդերը, Եմիսրոսը, Պալիումը, ու

բոլոր զարդերուն զլիւսուորը, Խոյրը (Mitra) զոր ես ինքնին կը գործածէի»¹²⁹։ Ու դեռ 1202ին Իննովկենտիոս Գ. Պապը Գրիգոր Զ. Ապիրատ կաթողիկոսին զրկեց Պալիումը, զոր անոր յաջորդը, Յովհաննէս Է. Մեծարարոյ կաթողիկոսը ընդունեցաւ¹³⁰։ Նոյն Պալիումը գործածեց Կոստանդին Ա. Կաթողիկոսն ալ։ Իսկ Գրիգոր Թ. պապը «ի նշան առաքելական սիրոյ եւ շնորհի» 1239ին զրկեց նոր Պալիում մը, ուրաբ մը եւ մատանի մը¹³¹։ Իսկ մեր յիշատակած վկայութիւններէն ալ (Բ. մասին մէջ) կը տեսնուի որ Ստեփանոս Սարմատեցի Յուլիոս Գ. Պապէն հրաժեշտ առած պահուն՝ ընդունած էր իրմէ յարգի խաչ մը, պատարագի սպիտակ եւ կարմիր զղեստներ եւ թագ մը։ Այս բոլորը Սրբ. Քահանայապետը իրր եւ ամենասիրելի հիւրի նուէր կ'ընէր¹³²։ Հուսկ յիշենք որ Պօղոս Ե. պապն ալ 1612-ին Մելքիսեթ կաթողիկոսին զրկելով «Քահանայական զղեստներ՝ աստուածային խորհուրդը եւ այլ սրբազան պաշտամունքներ կատարելու համար», կը գրէր. «Քեզի իրր ընծայ, մեզմէ շնորհուած, հանդերձ Ս. Պետրոսի օրհնութեամբ, որպէսզի քու սէրդ հանդէպ Առաքեալներու զլիւսուորին միշտ աւելի աճի...»¹³³։

* * *

Մինչեւ հիմա մեր ըսածներու լոյսին տակ, նկատմամբ Ստեփանոս Սարմատեցիի մահուան պարագաներուն եւ թուականին, կը տեսնենք որ վերեւ ներկայացուած կարծիքներու մէջէն միայն երկուքը կրնան ոտքի մնալ։ Առաջինը եւ հինգը կրնան ոտքի մնալ։ Առաջին կարծիքին համաձայն՝ Ստեփանոս Ե. մեռած ըլլալու էր 1551ի Յունուար 14ին. իսկ հինգերորդ կարծիքին համաձայն՝ 1552ի Յունուար 14ին։

Արդ, եթէ առաջին կարծիքը տառայի կերպով առնենք, պէտք է ըսել որ չի կրնար ճիշտ համարուիլ վասն զի Լեհաստանի թագաւորը, Սիկիզմունտ Բ. Օգոստոս, ինչպէս վերը տեսանք, 1551ի Մայիս 19ին պաշտօնապէս կ'ազդարարէր Ստեփանոս Սարմատեցի կաթողիկոսին՝

վերադարձնել երկու Ուղբային տղաքները իրենց մօրը¹³⁴։ Աւելորդ է ըսել որ թագաւորը այդպիսի ազդարարութիւն պիտի չընէր մեր կաթողիկոսին՝ եթէ ան չորս ամիս առաջ մեռած ըլլար։

Իսկ եթէ առաջին կարծիքը լայն իմաստով առնենք, այսինքն ըստ հայկական տոմարին Ռ. Թուականով, որ մասամբ 1551 եւ մասամբ 1552 տարեթիւներուն կը համապատասխանէ, կրնանք այն ատեն համաձայնեցնել հինգերորդ կարծիքին. որուն համեմատ՝ Ստեփանոս Սարմատեցի մեռած է 1552ի Յունուար 14ին։ Արդ, այս թուականն է՝ որ մեզի համաձայն ալ կը համապատասխանէ պատմական ճշմարտութեան։

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ — Մեր ուսումնասիրութեան եզրակացութեան դալով, կը կարծենք կարենալ ըսել հետեւեալները։

Ստեփանոս Սարմատեցի կը յայտնուի մեզի իրր մեծ հայրենասէր մը եւ ճշմարիտ կաթողիկէ մը։ Երկու յատկանիշներ, որոնք սքանչելիօրէն կ'ամբողջացնեն երեւելի կաթողիկոսին դէմքը, արժանաւոր յաջորդը հայ եկեղեցւոյ փառապանն եւ սուրբ կաթողիկոսներու։

129 Tekeyan, op. cit., p. 53 nota 1. Կոզեան, Անդ, էջ 426։

130 Azarian S., Ecclesiae armenae traditio de romani pontificis primatu, Romae 1870, p. 88; Balgy, op. cit., p. 64-65; Galano, op. cit., p. 335 seq. Կոզեան, Անդ, էջ 442, 449։

131 Tautu A., Acta Honorii III et Gregorii I, Vaticani 1950, p. 335; Galano op. cit., p. 375-376; Հացունի, Պատմ. Հայ Տարազին, էջ 410 յջ.։

132 Bibl. apost. Vaticana, cod. Lat. Vat. No 12561, p. 122.

133 Arch. Secr. Vatic., Pauli papae V epistolae ad principes, armar; 45, vol. 7, nr. 361, f. 151 seq.; A chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII cent., London 1939, vol. II, p. 1324.

134 Akta Grodzkie i Ziemske, vol. X, p. 60, nr. 906.

120 Petrowicz, op. cit., 170, 180 seq.

121 Հացունի Հ. Վ., Պատմութիւն Հայ Տարազին, Վենետիկ, 1924, էջ 386։

122 Tekeyan P., Controverses chritologiques 124), Roma 1939, p. 52-53; Կոզեան, Հայոց եկեղեցին, Պէյրուս 1961, էջ 426։ Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 142-144։

123 Հացունի, Պատմութիւն Հայ Տարազին, էջ 387։

124 Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 226 Կոզեան, Հայոց եկեղեցին, էջ 451; Balgy A., Historia doctrinae catholicae inter Armenos, Viennae 1878, p. 68; Galanus

C. Conciliatio Ecclesiae Armenae cum Romana, Romae 1651, I, p. 375.

125 Dournovo L. A., La miniatura armena, Milano 1961, tav. 48; Հացունի, Պատմ. Հայ Տարազին, էջ 381, 387, 391, 407, 409։

126 Հացունի, Անդ, էջ 387։

127 Dournovo, op. cit., tav. 48; Հացունի, Անդ, էջ 397, 405։

128 Կոզեան, Հայոց եկեղեցին, էջ 407; Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 153; Galano op. cit., p. 234; Tournebize F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900, p. 167, 236-8.

Տեղեկացած ըլլալով, անշուշտ, Պապին դեսպաններէն կամ Լեհաստանի հայ վաճառականներէն, որոնք այդ ժամանակ թուրքիա, Եգիպտոս, Պարսկաստան ու մինչեւ իսկ Հնդկաստան կը ճամբորդէին¹³⁵, թէ Տրիդենտեան ժողովը պիտի դամարուէր, փութաց դալու եւ խնդրելու եկեղեցական ու աշխարհական իշխաններու համադրամար ժողովքէն «հայկական հարցին» լուծումը: Դժբախտաբար Եւրոպայի կրօնական ու քաղաքական կացութիւնը շատ բարդ էր այդ շրջանին եւ խաչակրութեան ժամանակները շատոնց անցած էին:

Ստեփանոս Ե. Արեւինոսի հետ, եւ մանաւանդ քահանայապետական պալատի բարձրաստիճան պաշտօնեաներու հետ ունեցած խօսակցութեանց միջոց՝ անդրադարձաւ անշուշտ այդ եղելութիւնը: Հետեւաբար, ան նպատակ չունեցաւ սակարկելու ի՞ր եւ հայ եկեղեցւոյ հպատակութիւնը Հռոմի աթոռին, ապահովելու համար նիւթական օգնութիւն եւ շահեր, ինչպէս կը կարծեն հայ քանի մը պատմագէտներ: Այլ հետեւելով իր փառապանծ նախորդներու հետքերուն, «մեծ բարեպաշտութեան եւ կաթողիկէ ոգիի նշաններ ու վաւերագրներ տուաւ, մինչ հոս կը գտնուէր» ինչպէս կ'ըսէր Յուլիոս Գ. Պապը¹³⁶:

(Վ Ե Բ Զ)

Ստեփանոս Ե. Լուանդուն կաթողիկէ մը ըլլալու փաստը տուաւ Հռոմի շրջանակէն դուրսն ալ, այն է Լեհաստանի Հայոց առջեւ. եւ Սիկիզմոն Բ. Օգոստոս թաղաւորը ստիպուեցաւ միջամտել (երկու Ուղբային տղաքներու պարագային) հափառելու համար մեր կաթողիկոսին Լուանդը. որովհետեւ Լեհական թաղաւորութեան մէջ, այդ ժամանակ, սրտատմունքի աղատութիւնը ի զօրու էր:

Երբորդ մասին մէջ զրուածներէն այլ եւս յայտնի է որ Ստեփանոս Սարմատեցի 1552ի սկիզբները մեռած է Լէոպոլիս եւ թաղուած է քաղաքին Հայոց եկեղեցւոյն մէջ: Իսկ Արդոյ Անասեանի մէջըրած վկայութիւնները՝ ի պաշտպանութիւն իր կարծիքին, ընդհակառակն կը հաստատեն մեր ըսածը:

Հուսկ, ինչ որ Լէոպոլիսոյ Հայոց եկեղեցւոյն մէջ գտնուած Ստեփանոսի դամբանին կը վերաբերի, դժուարութիւն չունինք ընդունելու՝ որ ան շինուած ըլլայ կաթողիկոսին մահէն որոշ ժամանակ մը վերջ: Սակայն, չենք կրնար ընդունիլ որ, Անասեանի հաւատարմին համեմատ, շինուած ըլլայ «Հռոմի Պրոպագանդայի վորժակալներէն», ինչպէս յայտնի է այլ եւս մեր բերած պատճառներէն:

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՊԵՏՐՈՎԻՉ
(Լեհաստան)

ԿԱԹՈՂԻԿԷ ԹՈՒՂԹԵՐՈՒ

ԽՄԲԱԳԹԹ ՄԵԿՆՈՒԹԵՐՆ

(Շար. տե'ս «Բազմալեզու», 1963, Բ. 1-3, էջ 13)

Զ.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Ձեռագիրներու Յիշատակարանները մեծ կարեւորութիւն ունին առհասարակ. առաջինը կը բովանդակեն պատմական դէպքեր, ակնարկութիւններ՝ ժամանակակից անձերու, ձեռագիրը գրել տուողին կամ ստացողին վրայ, եւ զրին իսկ իր ծնոստացողին վրայ, եւ զրին տեղեկուցաց ու գաւառներուն մասին տեղեկութիւններ կու տայ, որոնք յաճախ ուղեւորները կ'ըլլան ստուգելու ժամանակը, զորոյն յառկութիւնը եւ այլ պարագաներ:

Մատենադարանին մէջ գտնուած Կաթողիկէ խմբագիր մեկնութեան հինգ ձեռագիրները համառօտակի ն կ ա ղ ա ղ ր ե ց ի (Բազմ. 1962 էջ 128-130). հարկ կը համարիմ ներկայ հատուածով մի առ մի ներկայ հատուածով մի առ մի յիշատակարանները, որոնք Մեկնութեան յարդը եւ ընդօրինակութեան մանրամասնութիւնները մեզի բացատրած ատեն, կը յայտնեն, օրինակի համար, թէ թ. 1462 ձեռագիրը Գրիգորի Կաթողիկոսի մօտ գտնուած ձեռագրէն արտագրուած է. հետեւաբար, ոչ միայն թանկագին եւ վստահելի է իր հրատարակումը, այլ եւ Ս. Ներսէս Լամբրոնացիի խնամքով, 1176ին, Մեկնութիւնն սրբազրուելէն 22 տարի վերջ, 1198ին կ'ընդօրինակուի Յակոբ գրիչէն:

Յիշատակարան Բ. 1462 ձեռագրին, գրուած 1198ին

(ի վերջ Ս. Սարգսի վկայարանութեան)¹

Անհատաբար դժուարութիւն եւ անդադար փառարանութիւն ամենասուրբ եւ համալոյ Յրրորդութեան, անսկիզբն Հաւրն, եւ ի նմանէ ծնեալ միածին եւ արարչագործ Բանին, եւ ամենասուրբ Հոգւոյն, Երկրին ի նոցունց էութենէ ըստ գիմաց եւ ըստ անձնութեան՝ երիս, սակայն բնութեամբ եւ արարչութեամբ միաչափ եւ համապատիւ ըստ սերովքիցն փառարանութեան, երիս սուրբ, բայց մի անգամ Տէր: Որ արժանի արար զիս զանարուեստ եւ զախմարկածինս Յակովբ հասանել մինչեւ ի վերջին զիծս, թէպէտ եւ այլ ձեռամբ գրեալ յայլոց, որ երեւիդ ի սմա. այլ եւ զայն պատճառն ցուցից ձերում կատարեալ իմաստից ընթերցողացդ: Զի զպարծանս բնաւին մանկանց նոր

1 Ս. Սարգսի վկայարանութեան կցուած է հետեւեալ ծանօթութիւնը. «Թարգմանեցաւ ճառս մեծաւ ինդրիւ, վասն հակառակութեան տառնի սրբոյն Սարգսի որ ընդ Հայք եւ Հռոմք, յասորոց գրոց ի Հայ լեզու, ի ձեռն կրաւնուր քահանայ Միխայիլի ասորոյ, ի հրաչակաւոր եւ ի մեծանուն վանացն մաւր Պարսամայի, շարագրութեամբ արհիեպիսկոպոսի Եղրաւր տէր Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, ի թուարկութեան Հայոց ՈՒ = 1158»:

135 Ալիշան, Սիսական, Վենետիկ 1893, էջ 462:

136 Cfr. Minuta Brevium Julii PP. III, arm.

41, t. 55, nr. 363.